

ԳԻՐԳ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Այս անունն է ստացել «Նախատակ Գրագետներու Բարեկամներ» ծանօթ էր-
բատարակչական խմբակը եւ իր այդ
ֆայլը բացատրող հետեւեալ յայտարա-
րութիւնը յանձնել մամուլին իր «Այ-
դի Հայ Գրականութիւն» հասոյթի հրա-
տարակութեան առթիւ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ,

1929 Սեպտեմբերին հիմը դրեցաւ
ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ
հրատարակչականին, որուն նպատակն
էր «Հաւաքել եւ հրատարակութեան տալ
արեւմտահայ նահատակ կամ մեռած
գրողներուն երկերը»:

Ուրախ ենք յայտնելու, որ անցած
տասը տարիներու ընթացքին, հակառակ
տնտեսական անօրինակ տագնապին,
կրցեմք լոյս ընծայել տասը լուսագոյն
հատորներ ծանօթ գրողներէ:

Արդ, կը գտնուին գործունէութեան
նոր շրջանի մը սկիզբը: Նահատակ կամ
մեռած գրագետներուն հրատարակու-
թիւնը վերջացած չէ, անշուշտ: Մէկէ
աւելի դժմէք իրենց կարգին կը սպա-
սեն: Եւ, սակայն, մեր նոր կեանքը ու-
նի մահ իր նոր պարտադրութիւնները:
Անցեալի անսպառ նիւթերու կարգին,
արդէն կազմւած է Արտասահմանի նոր
գրականութեան մը, գրական բոլոր սե-
ռերով: Հրատարակչական ուրիշ որ եւ է
մարմին գոյութիւն չունի այդ նոր հոգը
ստանձնելու համար: Նկատի ունենալով,
ուրեմն, օրւան պահանջները, «Նահա-
տակ Գրագետներու Բարեկամներ» հրա-
տարակչական մարմինը նպատակաւոր-
մար կը գտնէ ինքզինքը կոչել ասկէ յե-
տոյ ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ
նեմ, իր գոյութեան տալով աւելի ընդ-
հանուր եւ ընդարձակ իմաստ մը:

Առանց երբեք շեղելու իր հիմնական
նպատակէն՝ կընդարձակէ իր գործու-

նէութեան դաշտը, եւ կառաջադրէ հը-
րատարակել մահէ երիտասարդ կամ տա-
րեց, կենդանի հեղինակներուն գործերն
եւս, պահանջին եւ իր կարելիութիւն-
ներու սահմանին մէջ:

Ներկայ հատորը, իր մատենաշարին
11-րդը, առաջին փորձն է այս ուղղու-
թեամբ, որուն պիտի հետեւին, ի հար-
կէ, ուրիշներ ալ, շնորհիւ ընթերցող-
ներու բարոյական եւ նիւթական ֆաջա-
լերութեան, ինչպէս մինչեւ հիմա:

ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ս. Վրացեան, Մկրտիչ Պարոտ-
եան, Բժ. Լ. Գրիգորեան, Շ. Նար-
դուհի, Հրաչ Սարգիսեան եւ Ա.
Խանդավանդեան:

«Արդի Հայ Գրականութիւնը» պա-
րունակում է 18 հեղինակների երկերի
նմուշներ — Համաստեղի, Բ. Թովաթեանի,
Շ. Նարդուհի, Ն. Սարգիսեանի,
Ն. Պէշիկպաշեանի, Զ. Սիւրմէլեանի,
Հր. Ջարդարեանի, Ոստանիկի, Արամ
Հայկազի, Մ. Իշխանի, Շ. Շահնուրի,
Գ. Կառվարեանի, Փ. Միքայէլեանի,
Արմէն Սեւանի, Պերմուխի Բարսեղեա-
նի, Վահէ — Վահեանի, Բ. Նուրիկեա-
նի եւ Կ. Մեհեանի: Գրքէ բոլոր հե-
ղինակները իրենք ընտրած են հատորի
մէջ դրելիք կտորները: Այս հատորին
պիտի յաջորդէ եւ երկրորդը, իսկ եր-
րորդը պիտի նիւրի Հայաստանի յետ-
պատերազմեան գրողներին:

Հատորին կցւած հաշիւկոնից երեւում
է, որ 1936 թ. նոյեմբ. 1 - 1938 թ. օ-
գետ. 31 ժամանակաշրջանում «Հայ
Գրագետներու Բարեկամներ»-ը ունեցել
են 13.299,30 փր. մուտք, որից 2000
փր. փոխառութիւն: «Արդի Հայ Գրա-
կանութիւն» հատորի տպագրութեան
ծախքը եղել է շուրջ 10.000 փր.:
Տպւած է 1500 օրինակ: